

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՅ Ի ՄՈՒՇ.

Ի գրութեանց Գարեգին Եպիսկոպոսի Սրուանձեանց

Եկեղեցին 14 սիւնի վրայ կառուցուած է կամարներով ցած:

Աջակողմեան Տաճարի մէջն է ս. Կարապետի շիրիմի հանդէպ նորա ս. Աթանազինէի շիրիմն: Խորան և տաճար յանուն սուրբ Կարապետին է: Իսկ ձախակողմեան տաճարը և խորան՝— յանուն սրբոյն Ստեփաննոսին, երկոքին ևս գեղեցկաշէն, բարձրաբերձ, լուսաւոր, գմբէթարկ, Ս. Կարապետի տաճարին մէջ կը պահուին դաւազանք արծաթեայ, բուրվառք, սուրբ Մասունք, և ս. Աւետարանք, և Խաչք արծաթաղարդք ականակուռ, յորս իբր անդին գանձ է Հեթում թագաւորի ձեռամբ (գրեալ) հրաշագործ Աւետարանն:

Ի ս. Ստեփաննոս կը պահուին սկիհք, աղանիք, խաչք և այլ արծաթեայ անօթք, շուրջառք, վարագոյրք, զգեստք, մանաւանդ եպիսկոպոսականք՝ մարգարտայեռք: Ի կողմն ս. Ստեփաննոսի է տաճար ս. Աստուածածնի, յորում կ'զգեստաւորի ժամարարն և դպիրք:

Ի կողմն ս. Կարապետի տաճարին, է տաճար ս. Գէորգայ, որոյ ձախակողմեան որմին մէջ անձուկ յարկ մը կայ, ճգնարան Լուսաւորչի անուանեալ:

Երեք, խորանք ևս կան ի մեծ տաճարին, միջինն կամ աւագն է ս. Խաչ, յաջակողմն Լուսաւորիչ, ի ձախն ս. Յակոբ:

Մեծ տաճարի միջին գմբէթը կիսով հետ փլած է, և վրան փայտով ու հողով ծածկած: Զանգակատունը խիստ շքեղ շէնք է, որոյ գմբէթը կամ վեղարը հաստատուած է ութն սիւներու վրայ, և մէջ սեղան մը ունի ս. Հոգւոյն.

անուամբ, ուր Հոգեգալստեան կիրակին կը պատարագեն։ Ափսոս որ սուրբ Կարապետի և ս. Ստեփաննոսի և զանգակատան այն գեղեցիկ գմբէթները խախտեալ են յերկրաշարժէ, ամ է յամ կ'աւելանայ աւերն. և տանիքներէն ձիւնի հալոցին ու անձրեւին կաթիլներ կ'իջնեն յեկեղեցին։

Ս. Եկեղեցւոյ մէջ քաղուած նահատակներ։

1) Ս. Գերեզմանի շէմի տակ թաղուած է Մամիկոնէից տան իշխան Գայլ Վահանի որդի Սմբատ, որոյ վրայ կարմրագոյն փոս քար մը կայ, անոր վրայ եօթ Խոտաճարակ ճգնաւորներ նահատակուած են։

2) Ս. Ստեփաննոսի տաճարի շէմի տակ թաղուած է Մամիկոնէից տան Մուշեղայ յաջորդ Գայլ Վահան։

3) Զախակողմեան դասի ետեւ թաղուած է Մուշեղ մեծ իշխան։

4) Իսկ ս. Աստուածածնայ տաճարի մէջ թաղուած է Արծրունեաց Վարդ Պատրիկ իշխանի որդին ս. Ստեփաննոս, որոյ մայր ս. Գերեզմանի վրան երթալով պատժուեցաւ։

Ս. տաճարաց ետեւը Խաչքակն է, ուր թաղուած կան վանահարք, և ականաւոր վարդապետք, Խաչքակի վրան յԱրևելս ձգուած է կարգ մը սենեկաց, ուր կը բնակին վարդապետք, որոց ներքին յարկն երկարածիգ մի կամարակապ շէնք է, յորում վառելու փայտեր կը լեցունեն։ Հիւսիսային գլուխը այն սենեկաց՝ լուսարարի սենեակն է, որ դուռ ունի ներսին բուրջին մէջ և ի ներքոյ շինուած է ջրաղացն, որոց վրայ փոքր ամբարն ցորենոյ և ալիւրի իսկ կից այսմ, ընդարձակ և պատուական քարաշէն ամբարն է։

Տաճարին հիւսիս և արևմուտքը կրկնայատակ սենեակներ են ի պէտս ուխտաւորաց, վարի յարկի մի քանի սենեակներու մէջ կը բնակին վանքի գործակալներէն

ոմանք: Հիւսիսային և արեւմտեան միջանկիւնը շինուած է վարժարանն և ննջարանն աշակերտաց՝ հանդերձ սրահով մը. բայց կարի անշքացեալ վիճակի մը հասած է, և այս ընդարձակ շէնքին ներքեւ տընտեսատունն է և կաթնատունը:

Արեւմտեան հարաւային անկիւնը շինուած է Առաջնորդարանը, և այլ երկու ընդարձակ սենեակները և սրահը. Առաջնորդարանի մէջէն դուռ մը կայ գեղեցիկ բուրջին մէջ, և մի այլ փոքրիկ սենեակ. իսկ ներքեւը հացի փուռն է և մառանն. երկուքն ևս քարուկիր ու գեղեցկաշէն: Առաջնորդարանի ուղղութեամբ ի հարաւակողմէ կը ձգի կարգ մը սենեկաց, որոյ առջևի կամարները փլած են ժամանակաւ, և այժմ փայտէ ծածկուած է սիւնազարդ: Այս կարգի սենեակներէն քանիննրու մէջ վարդապետներ կը նստին, և մաս մը ուխտաւորաց համար է, և ներքին յարկը գործակալաց սենեակներն են: Անկեանը հարաւային արեւելեան կարգին փլատակ մը կը մնայ ի վաղուց հետէ, և մեծ տգեղութիւն մի է շինութեանց կարգին մէջ. դիւրին ալ չէ շինել, զի ջրախաղաց է վայրն և մեծ ծախուց կարօտ:

Վանքի ներքին բակին մէջ երկու աչքով աղբիւր մը կը վազէ հիւսիսային կողմը, և մէկ աչքէ աղբիւր մը արեւմտեան կողմը: Գեղեցկութիւն մի է բակին՝ ճաճարի դրան առջև շինուած սալայտակ չրջապատեալ տնկուած մաքուր քարերով և երկաթի վանդակներով: Բակի մեծ դուռը արեւմտեան կողմն է, որ կը բացուի երկրորդ բակին մէջը, և միջակ դուռ մը մառանի քովէն, որ կը բացուի ի հարաւ արտաքոյ պարսպին ու սրահակառը երկու քանդակուած առիւծներ են գրուած:

Երկրորդ բակը կը տարածի յարեւմուտս՝ չրջապատեալ քարէ պարսպով և երկու բուրգերով: Բուն և աւագ դուռն կը բացուի ի հարաւ՝ Մշոյ դաշտի ճանապարհը: Այս բակի մէջն է ս. Յարութիւն անունով փոքրիկ մատուռ գմբէթաւոր՝ աւանդեալ Լուսաւորչաշէն, և ժողովրդենէն կը կոչուի Դիւատուն, իրր աստ էր դուռն

դժոխոց և կայան Դիւաց, զորս կործանեց Լուսաւորին՝
և շղթայակապ իջոյց յանդունդս, որոց վային և ցաւին
ձայնը լսելու համար՝ ս. Սեղանին տակէն՝ ունկն կը դնեն
ուխտաւորներէն ոմանք:

Մատրանս կարգին երկարաձիգ միայարկ քարաշէնք
մը կայ, ճակատը փառատես, բայց մէջն անդործածելի,
ճեմարան պիտի լինէր այս, որոյ վրայ մտնած է Մամբրէ
եպիսկոպոս (800) ութ հարիւր լիրայ, և սակայն բան մը
չարժէ. այն ինչ այդ ահագին դումարով պիտանի և լրա-
ցեալ կարէր շինուիլ:

Բակին հիւսիսային անկիւնը երկու խանութ կայ
շինուած, ուխտաւորաց և եկաւորաց պէտքին համար, և
ասոր հանդէպ կը բացուի դուռ մը երրորդ բակին մէջ:
Երրորդ բակը տարածեալ է հիւսիս կողմն վանից՝ զոր
պարսպեց Սրբազան Հայրիկ (Խրիմեան), երկու դուռ ունի
հանդէպ միմեանց յարեւելս և յարեմուտս, ձիերու և
էշերու ախոռները շինուած են մէկ կարգով. իսկ բակն
ընդարձակ է յոյժ, ուր կարաւանները և տօնավաճառի
համար եկողները կը լեցուին:

Այս բակէն դուրս բարձր գիւրքի մը վրայ է Լուսաղ-
բիւրը երկու կամարաշէն կիսայարկով և ուռնիներով,
ուր ամեն ուխտաւորք կեննեն, կը մօնեն, կը լուացուին,
կը հանգչին, կը զովանան և կը զուարճանան:

Մօտ Լուսաղբիւրին է պարտէզ մը պտղատու ծառե-
րով, անոր վարը Տընկն է, և անոր քով Զենոբ Գլակայ
շիրիմն, անկուած խաչքարով յայտնի: Դէպի յարեւելս եր-
թալով՝ արտաքոյ պարսպին մեծ պարտէզն է և բանջա-
րանոց՝ որ կը տարածի Խաչբակի խցերուն առջև. իսկ
պարտէզէն վեր գեղեցիկ բլրի մը վրայ՝ (Թօգիկ ճգնա-
ւոր) գերեզմանն է, որոյ անունով կը կոչուի Թօթկայ
բլուր: Կարժէ որ մատուռ մը շինուի այս հոյակապ դրից
և հոյակապ անձին շիրմին վրայ: Զի այս Թօթիկն է՝ որ
զվանքն ի ձեռաց ասորւոց եհան:

Կարնոյ ճանապարհի բերան և երրորդ բակի պարսպի
առջևը յարեւելս՝ գերեզմանատուն է Բազու գիւղի Հայոց,

և պանդուխտ ննջելոց և վանից հասարակ միութանից ոմանց: Անտի յառաջ ի հիւսիս երթալով իբրև հինգ վայրկեան հեռաւորութեամբ, Աւետեաց բլուրն է. և այսպէս ուղւոյն հետ բարձրանալով՝ մէկ կողմդ կը մնան Բարեհամ աղբիւրն, Պաղ աղբիւրն, Սպիտակ աղբիւր, շէխոներ, և միւս կողմդ՝ Սաաքելոց աղբիւր, և այլ աննման ջրեր, մինչև կը հասնինք Խնակներ կամ Աւագ Ակներ, որոնց անունով վանքս կոչուած է:

Եւ այս ջրերը ժողովելով կուգան վանքի ջաղացքը. և անտի ի վայր կ'ոռոգեն արտեր, մարգեր և այլն:

Խնակներու գլուխը դէպ ի վեր «Հաւատամք» կը կոչուի. Կարնոյ ուղիով եկողները այս բարձրեն կը տեսնեն ս. Վանքը և կ'իջնան ի ծունկս յերկրպագութիւն. բազումք ևս հետի և բօրիկ մինչ ի վանք կ'իջնան:

Վանքի հարաւային կողմն պարսպէն դուրս քիչ մը խոր դրից մէջն է մատուռն, յորում են շիրիմք ս. Հարցն Անտօնի և Կրօնիդեայ, և Եօթն Խոտաճարակաց: Այս մատրան շուրջը բանջարանոց է, զոր սահմանեց հանգուցեալ լուսարար Յակօր վարդապետ: Հոս են մեղուի փեթակները, և քիչ մը հեռի աստի նոր այգի մը տնկեց, թթենեաց արտէն, ո՛ր աստի և անդր արդէն հնոց տնկած երկու այգիներ կան:

Ս. Սարգիս անտառին շինուած տաճար մը կայ, քսան վայրկեան հեռաւորութեամբ վանքէս, պարսպապատ շէնք մի է, որոյ բակի մէջն է մեծ մարագ, անասնոց ախոռները, ձիթահանք, և այլն:

Վանքէն ի ս. Սարգիս իջնալու ճանապարհին մացառներուն մէջ ձախ թւին վրայ է տեղին՝ զոր «Ջորահետիկ» կ'անուանեն, սուրբ Կարապետի Մասունքը կրող կառքին լծեալ ջորիին հետքը կը համարին:

Վանքէն հարաւային դռնէն մեկնող ուղին ևս քիչ մը յառաջ երթալով կը հասնի միւս «Հաւատամք», ուստի կ'երևի այն կողմէն եկողներուն՝ Վանքը: Այս Հաւատամքէն դէպ ի հարաւ երթալով, ճգնաւորաց քարայրներ կան, և քանի մը ալ ճանապարհի բերանը դէպ ի Միրաշգար

ըստած անտառալից ձորը:

Վանքի դեղեցիկ և օգտաշատ անտառներ շատ կան հանդէպ և շուրջը. դառինճի, փառճինի և սարճի պտուղներ: Ամենագուլարճալի է ընդարձակ ձորն, որ վանքէն սկսեալ վերին փակահէն կ'անցնի և կերթայ մինչև ներքին փակահ վանիցն՝ որ շինուած է առ բերան դաշտին:

ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆԻՅ ԶԵՌԱԳԻՐ ԳՐԵԱՆՔ

Գրեալ ի Գարեգին եպիսկոպոսէ Սրուանձեանց.

1. Հրաշագործ ս. Աւետարան չեթում թաղաւորի, բոլորազիր ընտիր մագաղաթ, պատկերազարդ ոսկեղօծ: Յիշատակարան.

«Փառք . . . Ես նուաստ մշեցի Դաւիթ երէցս ի դառն ժամանակին, որ այլազգիքն նեղէին զազգս քրիստոնէից, ևս առաւել զհոչակաւոր ուխտն զսուրբ Կարապետ Տաւրուոյ, և նոքա ի չքաւորութենէ՝ բերեալ գրաւէին այլազգեաց: Եւ յիշեցի թէ՛ Վերանի որ ունիցի զաւակ ի սին, և ընտանեաց նորա յերուսաղէմ», և իմ ի հալալ արդեանց տվի Մ. (200) դեկան և թափեցի զս. Աւետարանս, և վերստին դարձուցի ի ս. Կարապետ, յիշատակինձ և նախնեաց իմոց, և զաւակին իմոյ Յովանէսին, և կողակցի և այլ ամենայն արեան մերձաւորաց. որք ընթեռնոյր զԴաւիթ քահանայս յիշեցէք ի Քրիստոս, և որ յիշէ՛ ինքն յիշեալ լիջի առ Քրիստոս. ամէն. ի թվ. Հց (հայոց) ՊԾԷ (857=1408) որ թափեցի»:

«ԶՄարտիրոս սուտանուն սարկաւարքն յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր, զի զվերջին յիշատակարանս գրեցի, աղաչեմ չլինել մեղադիր, զի կար մեր այս էր. եւ մի ոք իշխեսցէ մերձենալ ի սուրբ Աւետարանս, կամ գողանալով, կամ գրաւ դնելով, կամ վաճառելով. որ հակառակի կամ իւր արդիւնք համարի, նա զանէժսն Յուդային և

դիպէնին առցէ, և ընդ անհաւատան դասի, և իւր թու-
ղութիւն ոչ աստ լինի, ոչ ի հանդերձեալն, եղիցի եղիցիս:
(Այլ գրչով.) Պատուական եղբարք, թէ զվերջին նո-
րոգողի յիշատակն կու կամենայք որ կարգայք. Ղուկաս
գլխու յետեւն է. դիւտ և կարգան և զմեղաւորս յիշեմ
ի Տէրս:

—Ահա ի վերջ Ղուկասու գրեալ Յիշատակարանն. —

«Ով պատուական եղբարք, գրոց աշակերտեալ ան-
ձինք, յորժամ հանդիպիք այս սուրբ Աւետարանիս, կար-
գալով կամ՝ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս
ձեր զբարեմիտ և զհաւատարիմ ծառայն Աստուծոյ Աս-
տուածասէր Սիմէոն սարկաւազն, որ բազում աշխատու-
թեամբ ետուր վերստին նորոգել և կազմել զսուրբ Աւե-
տարանս քանդի ի դառնութենէ ժամանակիս, որ այլազ-
գիքն կու նեղացնէին զվանականքն, և նոքա որ վանա-
կանքն էին փախչէին ամէն ա (մէկ) յաշխարհ մի, և
եղեալ զսուրբ Աւետարանս ի դարանս, Կարապետին և
անփոյթ արարին, զի գլխաւոր ոչ կայր, և անցաւ ժամա-
նակ մի. այն է որ ասէ, ի բազմանալ անաւրինաց ցամա-
քեսցի սէր բազմաց, և յորժամ բացին տեսին զի փրտեալ
էր թէ գիրքեր և թէ Աստուածաշունչ ու թէ Աւետարան,
և կայր որ ի կարգալ չէր գալ անփոփեցին ի հողն, զոր
լուեալ երկիւղած և գրասէր ծառայն Աստուծոյ Սիմէոն
սարկաւազն, տրտմեալ յոյժ և փափագանաւք ետ բերել
ի Համիթ, և զամենեսին կրկին նորոգեաց այն որ ձեռն
հառաւ, և կրկին դարձոյց ի տաճար սուրբ Կարապետին,
եւ որ կարգայք կամ՝ աւրինակէք յիշեցէք և լի բե-
րանով Աստուած ողորմի ասացէք պատուական Սիմէոնին
և ծնողացն իւր և եղբարցն. խոճա Կուէսէրին և խոճա
Շահաւիրին հանգուցելոյն առ Քրիստոս, և ամենայն ազ-
գականացն իւր, և ով յիշէ լի բերանով Աստուած ողորմի
ասէ, յիշեալ լինի յանմահ Արքայէն որ արար զերկինս և
զերկիրս:

«Վերստին նորոգեցաւ սուրբ Աւետարանս ի մայրա-
քաղաքն Համիթ ի դուռն սուրբ Կիրակոսայ ՌԻԳ (1023 =

1574) Թուականին Հայոց, ի յԱռաջնորդութեան քաջ բա-
բունապետին մերոյ Տէր Յօհաննէս վարժապետին, որ
յայսմ յետին ժամանակիս քաղցրահամ վարդապետու-
թեամբ իւրով փայլէ որպէս զարեգակն ի մէջ Հայոց ազ-
գիս, և լուսաւորէ զխաւարեալ հոգիս մարդկան, և է
ժողով որբոց և տնանկաց, և զի նա եղև պատճառ որ
նորոգեցան սուրբ Աւետարաններն, և ինձ անյարմար
սուտանուն գրին կազմողիս անմեղադիր լերուք, զի խիստ
չարչարեցայ հետ աւալային, և նեղացուցի զպատուական
Սիմէոնն ինձ վնասէք և ու (հազար) երանի տվէք նորա,
որ զայս անցեալ և խաւարեալ գրեանքն ի լոյս երեր-
քանզի յորժամ քակեցի զսուրբ Աւետարանս հիւանդա-
ցայ մինչև ի մահ, և յորժամ ողջացայ, այլ ոչ յիշէի ի
մերձեանալ ի սա, զի կարծէի թէ՝ ի սոցանէ էր իմ հիւան-
դութիւնն, զի անարժան էի և լրութեամբ մերձեցայ.
և այս պատուական Սիմէոնն տարաւ զիս ի դատաւոր
հազիւ հաւանեցոյց զիս բռնութեամբ և զոր աւելի դրամ
տալով. վնայ ինձ եղկելոյս և ողորմելոյս, կու պարծենամ,
ինձ փառք կու համարիմ, զի անմիտն, զի անմիտն յա-
նարգանս իւր բարձրացուցանէ զանձն: Ո՛վ եղբարք, թո-
ղութիւն խնդրեցէք մեզ գնացելոյս, և դուք արժան լի-
նիք ողորմութեանն Աստուծոյ. Ամէն».

(Վերջին յիշատակարան հասարակ գրով գրուած).

«Դարձեալ յիշեցէք զԱրիստակէս եպիսկոպոսն, որ ի
Թուին Հայոց ՌՃԳ. (1103=1654) յոյս ի յԱստուած-
եղեալ և սկսաւ նորոգել մեծ գմբէթ կաթուղիկէին սրբոյն
Ստեփաննոսի բարձրաբերձ և սրբատաշ յօրինուածով, այլ
և զսագեր բ. գմբէթաց, և զպարիսպն շրջապատ, և զաղ-
բիւրն բարեհամ և զմեծ դարկան (այսինքն դուռն) կա-
մարակապ և երկաթապատ դռներովն, և զտնտեստունն
խցերովն, այլ և զտեղի Խոտաճարակ ճգնաւորացն խոյա-
կապ եկեղեցի, և զայլ խախտեալ տեղիսն նորոգեաց,
զորս Տէր Աստուած ամենայնի տաղէ վարձս վաստակոց
իւրոց. Ամէն».

Նաև Արիստակէս եպիսկոպոսս ստացայ զսուրբ ժա-
մագիրքս և եղի յիշատակ սուրբ Կարապետի, այլ և ընդ-
ամին ստացայ և ազատեցի զգրաւ դրեալ գրեանս սուրբ
տանս, և Ասմաւուրք մի, և զՀեթում բարեպաշտ թա-
գաւորի խաչիւ սուրբ Աւետարանս զաւատեալ և զարդա-
րեալ ներքոյ և արտաքոյ զանազան յօրինուածովք և ոս-
կեխուռն երանգօք. ընդհոսին և փոքր ժագաղաթ Աւե-
տարան մի նոյնգունակ և ոճով, և բ. վառի խաչ, ևս
է. (7) ըռանկ շուրջառ մի և այլ բազում անօթք, որք
էին գրաւ և գերի ի ձեռս այլազգաց, և իմ բազում աչ-
խատութեամբ ազատեալ զսոսա և անդրադարձուցեալ
վերստին ազատեալ զսուրբ գրեանքն, եղի յիշատակ ի
դուռն սուրբ Կարապետին, ի փրկութիւն հոգւոյ իմոյ.
Ամէն:

Իսկ ի հազար հարիւր յիսուն և հինգ թվին (1706)
նորոգեցան սագեր սրբոյ Կարապետի (գերեզմանք) գե-
ղեցկայարկ տաճարին և սրբոյն Ստեփաննոսին:

Ի սոյն ամի Սարգիս վարդապետն նորոգեաց սրբա-
տաշ քարամբք կրամածիւք զեղրդոտի Լուսաւորչաշէն վա-
նացն զսագերն, հանդերձ այլովք շինուածովք, զբովան-
դակ շինուածոյն ծախսն ինքն հոգաց և դարձաւ յառաջին
վանսն մեր:

Ո՛հ, եղուկ ժամանակիս թէ զինչ գործեցաւ, որպիսի
նեղութիւնք . . . պատեցին. զ . . . ահագին էր . . . որ
զանշարժելի լերինս ի միմեանս հարկանէր. զահագին մե-
ծամեծ վէմս պատառէր, և զգնացս գեղեցիկ աղբերաց . . .
գելեալ ի բազում . . . ի ցամաքութիւն փոխէր տեղին, զի
տեսողք ստուգելով ասացին առ ի վայրս գնացք Եփրա-
տայ ահագին գետոյն ընդ կրունկն դարձան ջուրքն ընդ
երեսս . . . ին սփռէին. և մինչ վազվազակի երկիւղալիւր
շուտափութութեամբ հանդերձ ամենայն միաբան . . . իբր
արք հարիւր . . . արտասուագոյ հառաչմամբ Ասայէլի գնա-
ցիւքն գրեթէ արտաքս ոստէար, որպէս ճնճղուկ ապրեալ
ի յորսոյ. բացար զաչս մեր և յառեցար տեսանել զբարձրա-
գիր կաթուղիկէն սրբոյ Կարապետին, ահա ոչ երեւիր. զի

անկեալ էր յերկիր. ընդ որում և շինուածք մեծի ուխտին քայքայեալ և կործանեալ էին:

Թվին ՌՄԼԶ. (1236=1787) Զանգակատունն շինեցաւ ձեռամբ Աստուածատուր եպիսկոպոսին, ութն սեան սուրբ եկեղեցին ևս նորագ շինեաց:

Շինեցաք զկաթուղիկէն գեղեցկաքանդակ քարեայ սեամբք, և զզանգակատունն կաթուղիկեայ խաչիւ պսակեալ և ս. Հոգւոյն սեղանին զարդարեալ:

— 720 —

Փոքրադիր մագաղաթ Աւեսարան բոլորագիր կիւմիւսխանէ սուրբ Աստուածածին եկեղեցւոյ.

Թիւ 1 Յշ. Ի թուականիս Հայոց ԶԺԱ. (711=1262.) գրեալ եղև սուրբ Աւետարանս... Քրիստոս որդի Աստուծոյ երկիւղածաց կամաց կատարիչ և պարգևատու ողորմութեան յուսացելոց ի քեզ զօրացուցիչ, ողորմեա Յովսէփ քահանայի և Պաւթի որդւոյ յաւուրն մեծի գալստեան քո. ողորմեա ամէնողորմ և բարերար Աստուած

յահաւոր ատենին և դասաւորեա յաջակողմեանսն, Ըստ այսմ հաւատոյ և հայցման ողորմեա տէր Աստուած Տրդատայ գրողի սուրբ կտակիս որ արժանի արարեր աւարտել, եւ Բարսղի հաւր և Բաղդաւորի մաւր բազում ողորմութեամբ քո. եւ ընթերցողի սուրբ գրոյս և յիշելոյ գրեալքս ի յիշատակս ողոմեա... զի փառաւոր լիցի անուն քո... Ամէն:

Յայնմ ժամանակի զաւրացեալ էին ազգն նետողաց և աղեղնաւորաց, որք աւերեցին զաշխարհս յարեւելից մինչև ի ծովն Եգիպտոսի և զկողմն հարաւոյ, և էր նեղութիւն մեծ ամենայն ազգաց սոյնպէս և տեսիլ սրբոյն Ներսիսի թէ բազում պատուաւորք անկանին ի փառաց, եւ ո՞ կարէ ասել զկոտորումն անթիւ մարդկան. զլ. (30) ամ ոչ դադարեցին հեղլոյ

տուած իւրեանք ի գոգն Արրահամու հանգուցանէ և ընդարդարսն պսակէ ամեն:

(Անվարժ գրով գրեալ) յայս սուրբ Աւետարանս սուրբ Յօհաննիսայ խորնէն դուրս ելաւ, շատ տարուցէ ծածուկ որ Տէր Յարութիւնի վկայութեամբն մելիքեան բերաւ մեր չնչին դպիրիս վրայ կատալիք արաւ, թողութիւն ինենք տեսողք մեղաւորս սուրբ գրքերիս զօրութիւն տեսայ ականայտէս կարճառօտ պատմեմ կողմս դժօխդկքք բազում քուլով կողմս արքայութիւն սուրբ գիրս մէջն շարն փաթթեալ արքայութեան լուսի մէջ կանքեալ ոչ իքն այրեալ ոչ շարն հանեցի դու համբուրեցի կազմեցիցի մեղաւորս ականատես տեսայ տեղս գրեցի թէ դուք ալ հաւատաք երկրպագութիւն էրեք հաւատացէք, ինչ խրթիր ուղէք տուող է, մեզ տըւէ ամեն փառքս մարմնաւոր ևս առաւէ հոգեւոր զպուխիան Յօհաննէսս հող մօխիր կողինքի մէջ գրեցի ցաւի մէջ հաւատացողն Աստուած ինքն ալ ամեն ցաւէ ազատէ չի հաւատացին ալ Աստուած բարի տայ: Թիւ հայոց (1256=1807)ին հոտեմբերի ամսոյ 13-ին կիմիշանէ տաս մէջէ եղև:

(Ի վերջն Ղուկասու) յիշեցէք զծնաւդս իմ, Աւաքն, Յուստիանէն, ով ասի ողորմի Աստուած իւրն ողորմի ի աւուրն դատաստանի:

(Ի վերջն Մաթէոսի) սուտ անուն Աւաքելս յիշեամի բերան ողորմիս ասա քեզ և ինձ:

3. Բազմապատկեր Աւետարան թղթեայ բոլորագիր (յորում Գամաղիէլ վարդապետ վեղարով և գաւաղանով նկարուած դաս տայ Քրիստոսին, որ ի ծունկս նստեալ է ի մէջ տաճարին) որ ունի պատկերս 50: Եւ 10 նկարք համաբարբառի: Յերկրորդ գալստեան Քրիստոսի խաչի պատուանդանին աջակողմ վեղարով փիլոնով ձեռնամած ի ծունկս անկեալ վարդապետ, ի ձախմէ եկեղեցւոյ շապիքով և գագաթը բոլորակ գերծեալ ի ծունկս անկեալ սարկաւաք: Ի ստորեւ գրեալ է, «սուտ անուն սարկաւաք, և ուսուցիչն իմ արհի եպիսկոպոս Փիլիպպոս կեչառեցին»:

Յ₂ . . . Արդ եղև կատարումն սուրբ Աւետարանիս ի թուականութեան հայկազան տումարի ՌԼԶ (1036=1587) թուականի ի դառն և ի չար ժամանակի որ ներկիմք յանաւրինաց, Աստուած ազատէ այսպէս տարերացս ամէն, և ի Հայրապետութեան Տեառն սուրբ Աթոռոյն Էջմիածնայ Տէր Գրիգոր կաթողիկոսին, Տէր Առաքել կաթողիկոսին, Տէր Դաւիթ կաթողիկոսին, այս երեքինս որ նստին ի յաթոռ Հաւրն մերոյ սուրբ լուսաւորչին:

Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Կարնոյ որ կոչի Առզուրում, և Աստուածապահ գեօղս որ է Սալաձոր, ի տունս նորաչէն սուրբ Սարգսիս և այլ սրբոց որ աստ կան հաւաքեալ, և Առաջնորդութեան մերոյ Պողոս եպիսկոպոսին և միաբանից ամէն, ի տեղոյս Կարապետ քահանային և ընկերաց նոցին . . . Աշխատող Առաքել սուտ գրիչ . . . Մինաս սարկաւաք որ ձեռնտու եղև թուղթս կոկելոյ . . . :

(Ի մէջ նկարեալ երկրորդ խորանին գրեալ) ծաղկեցաւ սուրբ Աւետարանս ի թուիս հայոց ՌԼԶ, ի քաղաքս Ծանախու, որ տաճկաց Կիւմիւշխանայ ասեն, ի դուռն սուրբ Սարգսիս, գրեցաւ յերկիրն Կարնոյ, որ է Արզուում, Ով եղբարք յորժամ բանաք սուրբ Աւետարանս տեսութեան, մի մեղադրիք զի կարս մեր այս է (Առաքել):

4. Աւետարան պատկերազարդ յիշատակարան... գրեցաւ սուրբ Աւետարանս ի Յամիթ քաղաքի ի դուռն սուրբ Սարգսի զաւրաւարին, ի Առաջնորդութեան Յահաննէս քաջ ընթերցողին որ յայսմ փոխեցաւ առ Քրիստոս, ի թուաբերութեան հայոց ՌԼԱ. (1031=1582) ձեռամբ Մսկացի Ներսէս էրիցու, որոյ հանգիպեալ Տէր Աստուածատուր եպիսկոպոսն գնեաց զԱւետարանս և ետ ծաղկել զսա ոսկում և լազուարդով յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոց հօրն Ղանդուրալին և մաւրն մեծ Խաթունին և եղբաւրն Մկրտչին և Խաչատրին որ փոխեցաւ առ Քրիստոս, և միւս եղբօրն Բարիլոյսին և քուերցն Թուրվանտին և Հուրմաթին, և հարսներուն Վարթխա-

Թուռնին և իւր որդւոյն Ստեփաննոսին, որ առ Աստուած փոխեցան, և այլ մեղիքին և իւր որդոյն Պապանին. Ուստիանին և իւր որդւոյն և իւր հօր եղբօրն Յակոբին և իւր որդոցն և միւս հօրեղբօր Սուլթանուն, և միւս հօրեղբօրն Նուրալոյն և իւր որդոցն, և իմ հօրեղբօր որդոյն Ամիր պակին և իւր որդւոցն, և միւս հօրեղբօրորդոյն Ամիրին և իւր որդոցն ամենեցուն և ամենայն արեան մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոցն ամեն:

5. Աւետարան միջադիր հնացեալ թղթեայ յիշատակարան . . . յիշեցէք զստացող սուրբ Աւետարանիս զհեղահոգի զՇահապարոն և զպարոն Պապն և զԿարապետն և զԹոհաննէս և զՎարդն և ըզ իւրեանց զաւակն և զկենակիցքն նոցա և զծնողքն նոցա . . . ի Թուին 22Ը. (988 = 1539) փետրուար Թ. և փառք Աստուծոյ ամեն:

6. Փոքրադիր Աւետարան թղթեայ և պատկերազարդ յիշատակարան . . . յիշեցէք զնուաստ Պետրոս երեցս որ ետ Հոգին սուրբ կարողութիւն գրել և աւարտ ածել զԱւետարանս ի քաղաքս որ կոչի Գիմիշխանա ընդհովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Ամենափրկչին... ի Թուականութեանս մերոյ ՌՃԻԲ. (1122 = 1673) ի հայրապետութեան Տեառն Յակոբայ երից երանեալ երջանիկ Հայրապետին, և մերոյ քաղաքի առաջնորդութեան Սահակ վարդապետին Աստուած զինքն սուրբ վարդապետաց դասուն դասակից և պսակակից արասցէ. աշխատանք վարդապետիս բազում է ի վերայ իմ զի ի լոյս էած և հայր և ձեռնադրող եղև ինձ . . .

7. Աւետարան միջադիր թղթեայ, յիշատակարան . . . բարեմիտ և սրբասէր Տէր Սամուէլ եպիսկոպոսն սուրբ Յարութեան լուսարարն ստացաւ սուրբ Աւետարանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ անջնջելի և յաւիտենական հոգւոյ իւրոյ և ծնողացն . . . գրեալ եղև սա ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ընդհովանեաւ սուրբ առաքելական աթոռոյս, ուր հանգուցեալ կայ գլուխ Աստուածարեալ սուրբ Առաքելոյ Յակոբայ որդւոյն Զեբեդեայ և այլ ամենայն տնօրի-

նականաց Տեառն Աստուծոյ մերոյ. ի թուին հայոց ԶՂԸ. (998=1549) (Այլ յիշատակարան) Քրիստոս Աստուած . . . երկնից արքայութեան արժանի արա վերստին նորոգել տուողի հոգին զտիրացու Սիրունին. և իւր մեծ պապուն խօճա Պողոսին, և մամուն Գուլար Խաթունին, հօրն խօճա Ղազարին, և մօրն Ղայաթ Խաթունին, և եղբարցն մահտեսի Նիկողայոսին և Գրիգորին և Ղումրի չալապուն

(Այլ գրով) թուին ՌՃԽ. (1140=1691) ամին ես Տէր Պետրոս կապեցի զաւետարանս ի քաղաքս Գիմիշխանա ընդհովանեաւ սուրբ Աստուածածնին

Էօթներորդ Աւետարանի այսինքն յերուսաղէմ գրեալ, յիշատակարանէն առաջ օրինակեալ էր հանգիստ սրբոյն յՕհաննու Աւետարանչին, և անկէ առաջ որ է վերջն յՕհաննու Աւետարանին, յետ բանիցս «ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն որ թէ գրեալ էին» գրուած է «գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր» այսինքն իրք կնոջ շնացելոյ և յետ այսմ հետեւեալ յիշատակարանը կայ «զայս յիշատակ բանի ընկալաւ եկեղեցի յասորոց Աւետարանէ բանիւ պապիասա ումեմն Յօհաննու աշակերտի, որ և յետոյ հերձուած խաւսեցաւ և խօտեցաւ. եւ է կարգ բանին յութսուն ու վեց համարին, զկնի այնմ բանին որ ասէ, քննեա և տես զի մարգարէ ի Գալիլիէ ոչ յառնէ. եւսիրի է ասացեալ»:

8. Աւետարան միջադիր թղթեայ. Յիշատակարան յիշեցէք յաղօթս Զեր զնուաստ Պետրոս երեցս որ ետ հոգին սուրբ կարողութիւն գրել և աւարտ ածել զաւետարանս ի քաղաքս փոքրիկս որ կոչի Գիմիշխանա ընդհովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Ամենափրկչին, զոր և գրեցաւ Աւետարանս Աստուածահոտ և Աստուածաշունչ, ի թուականութեանս մերոյ ՌՃԽԱ. (1121=1633) ի հայրապետութեան հայոց Տեառն Յակօբայ երիցս երանեալ երջանիկ հայրապետին, և մերոյ քաղաքիս Առաջնորդութեան Սահակ վարդապետին

9. Աւետարան մեծագիր թղթեայ հնացեալ. յիշատակարան . . . Տէր Ղազար հեղահոգի և որբասէր կրօնաւորն ստացաւ զսա . . . ճանապարհ և դուռն և առաջնորդ իւրեանց յաստեացս ի հանդերձեալսն, և յերկրաւոր ազգաւորացս ի յերկնաւոր անդր տուն և անցաւ և յանաշխատ կեանքն, ի մեղաց իւրոց քաւութիւն և սղալանաց իւրոց ի թողութիւն . . .

Գրեցաւ սա ի թուարեւութիւնս հայոց ՁՂԱ. (991 = 1542) ի դառն և յանբարի ժամանակս ի դաւառս Եկեղեաց որ այժմ Երզնկայ կոչի, ի գեօղն Խողնձիգ: Ընդհովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Կարապետի և այլ ամենայն սրբոցն որ աստ կան հաւաքեալ. ձեռամբ Մկրտիչ անարժան գրչի որ զանունն ունիմ և զգործն ոչ . . . յիշեցէք սրտի մտօք ի մաքրաւիայլ յաղօթս Ձեր ՂԱղիզ Մելիքն և զհայրն իւր զԹորոսն և զմայրն իւր զՄարթայն, որ առ Քրիստոս փոխեցան, և երկու եղբարցն Աղիկչան և Կարապետն, որ են, երկու հարսինն Թուրվանդին և Շահփաշին և ամենայն զարմից և զաւակաց սոցա, որ է դա ի Շեսիեանու երկրէն . . . զնեաց զսուրբ Աւետարանս ի Ժէ Ֆլօրի. և ետ ի ձեռս Տէր Մատթէոսին զի Տէր Աստուած վայելել տացէ . . . աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչն իմ զՏէր Յօհաննէս եպիսկոպոսն որ կոչի Անտոնենց, և զՏէր Ղուկասն, զի աշխատանք ունի ընդ մեզ. . .

(Նոտր դրով գրուած) յիշատակ է սուրբ Աւետարանս Շեսիեանցի Հայտարին, կնօջն Թարթիպին, որդւոյն խօճա Պալէ, Յեսապալէ, Սիմանպալէ սարկաւաքին Աստուածատրին, արեան մերձաւորաց և կարգացողաց յիշխակ եգեր ի դուռն սուրբ եկեղեցւոյն Չարխափնայ, Աստուածողորմի իւրեանց հոգւոյն յիշատակն օրհնութեամբ եղիցի ամեն: Քրիստոս Աստուած քօ ի միւսանգամ գալստեանդողորմեա Մելքոնին և իւր եղբօր Պալէ, որ ետուն զսուրբ աւետարանս նորոգել վասն իւրեանց հոգւոյն և իւրեանց ծնողաց հոգւոյն Յօհաննէսին և Շուշանին . . . ողորմեա սոցա սուրբ աւետարանիս բարեխօսութեամբ, որ ետուն սրբել և մաքրել և նոր կաղմել վասն իւրեանց արեւոյն և

ննջեցելոց հոգւոյն պապուն Պօյաճէ՝ և մամուն Թուղթ-
տարին . . . Տէր Սիմէօն . . . քակեցի սուրբ Աւետարանս
և նոր կազմեցի . . . Թուին ՌՃԼԲ. (1132=1682):



Կիւմիշեանէի ս. Փրկչի վանուց ձեռագիր մատեանի
և յիշատակարանի.

Թիւ 1. Աւետարան միջագիր, բաղմապատկեր 49
պատկերօք և բոլոր էջերը ծաղկեալ և ոսկեզօծ, տասն
խորանօք. մագաղաթ բոլորագիր:

Յիշ . . . հող և փոշի օտից ձերոց սուտ անուն Յա-
կօբ գրիչս . . . կատարեցաւ սուրբ աւետարանս այս ըստ
կարողութեան իմոյ ծածկաձև գրեցաւ ի քաղաքս Խորձոյ,
որ կոչի Կեղի, ի դուռն սուրբ Աստուածածնին և սուրբ
Յակօբին և սուրբ Սարգսին և այլ բազում՝ սրբոց որ աստ
կան հաւաքեալ, ի թուաբերութեան հայոց Ռ. Լ. Ե. (1035
=1586) աւարտեցաւ ի դառն ժամանակիս, որոյ եմք ան-
պիտանացեալ լի ըստ լիոյ վասն ձմեռնացեալ ժամանա-
կիս . . . եկեալ էի ի քաղաքն Արզրում . . . բարեսէր
բարեպաշտ Աստուածատուր երէց որ է Կեղցի, հանդէպ
միմեանց եղաք սիրելի և բարեկամք, առաւ զմօխիրս ե-
կանք ի Կեղի, և զեղբայրն իւր զ'տէր Մեսրոպն ետ աշա-
կերտ և ուսաւ շնորհին Աստուծոյ, Աստուած զիւրեանց
հոգին արժանի առնէ տեօրեան Յիսուսի . . . յիշեցէք
Յակօբ սարկաւազն Զուղեցի և զուսուցիչն իմ քաջ և
բաբունի լուսաշնորհ և ծաղկազարդ անուանօք առաջի
Աստուծոյ Զաքարիա եպիսկոպոսին, որ է լրմբնցի, ի քա-
ղաքն որ կոչի Վան, որ ետուր այսչափ շնորհս. Աստուած
իւր հոգին լուսաւորէ ամէն:

. . . յիշելի արժան առնէք զիս Յակօբ գրիչս, և հայրն
խաւճայ Վալի, և մայրն իմ Աւղլան փաշէն, և եղբայրն
Նուրիշանն, Միրօլայշանն, և հանգուցեալն ի Քրիստոս նո-
րաբողբոջ Միլղա բէկն որ փափկամնացիւր, և քորքն

իմ Գուլաղէն օսկի շուշան ծաղիկն, փոքր մեր Տատիկն, և տնտեսն մեր . . . ով եղբարք, դարիպն խիստ դժար է մեղ չդնէք. յամենայն կողմանց դառնութիւն է և հոգս, ոչ կարէ արձակել ի սիրտ իւր. հազար թէ խաւսի ընդ սիրելիս իւր և ուրախ առնէ, անհնար է որ միտքն իւր իմաստութիւն ընտանեցնէ, և տրտմութիւն քաշէ. Ով Աստուածասէր յիշեցէք զմահտեսի Մաղաքիա քահանէն, որ է բարեպաշտ և պաշտեցող քաջ, և որդիքն իւր որ գրեալ է, և իւր տանն աւարտեցաւ սուրբ Աւետարանս, Աստուած իր հոգին լուսաւորէ ամէն . . . («Սոյն աւետարան տուեալ է յիշատակ սուրբ վանուցս տրապիզօնցի թերզի Կարապետի որդի մահտեսի Պետրոսէն, 1827 սեպ. մէկ» որպէս գրուած է Աւետարանի սկիզբը):

2. Աւետարան միջադիր հասարակ պատկերօք և նկարեալ խորանօք, թղթեայ. (ի սմա ևս «իրք կնօջ շնացելոյ» յաւարտ աւետարանին Յովհաննու գրեալ է):

Յշ . . . սին ի լուսաղարդ ծնեալ զարմից սիօնի անուն կոչեցեալ նմա Ղուկաս, որ պատճառ եղև սմա. և լծաւ ի քաղցր լուծն Յիսուսի և նորին առաջնորդութեամբ և կարողութեամբ կատարեաց զսա, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ Աստուածախաւս սուրբ Աւետարանիս, և ետ գրել զսա յիշատակ հոգույ իւրոյ և ծնողաց Յովհաննէս քահանայի . . . դրեցաւ սուրբ Աւետարան ձեռամբ Զաքարիայի որդւոյ Մկրտիչ քահանայի . . . գրեցի ձեռօք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ և անհանգստութեամբ . . . ի քաղաքիս որ կոչի «Վան» ընդհովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Սարգսի զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսի և սուրբ Գէորգայ զաւրավարին, ի կաթողիկոսութեան հայկազեան սեռի տէր Դաւթի աղթամարեցւոյ, և ի թագաւորութեան այլասեռից Ղարա Եուսուֆի, զոր Տէր Աստուած իօրայելի պահէ անխախտ որ չի սասանի զաթոռ մերոյս հայրապետի և զմերազին թագաւորին, զի յիշելով զանուն սոցա սասանել սաքրին և ոչ

ևս թշնամիք ճշմարտութեան, և էր մեծ թիւն հայոց Պ. Կ. Բ. (862=1413) . . . յիշեցէք ի Գրիստոս զստացող սուրբ Աւետարանիս զՂուկաս քահանայն և զՂաւակն զՍիմէօն քահանայն, և զնորաբողբոջ զաւակն զՅովհաննէսն և զծնող Սիմէոնին զՄարթէն և զկողակիցն զՄամիաթուն . . . և զանարժան դրիշս զԶաքարիա և հայրն իմ զՄկրտիչ քահանայ և զմայրն իմ ըստ մարմնոյ, և զօրքուրն իմ զԽեր մելիք և զկրկին մայրն մեր Զիլ խաթուն որ առաւել մայր սնուցաներ զմեզ և դարմաներ, և զերկու եղբարս իմ զՅովհաննէս գրիչ և Ներսէս . . . այլ և զհոգեւոր եղբայրն իմ զՅովհաննէս որ հանապազ կերակրէր զմեզ և ուրախացուցաներ . . . :

«Այլ գրով» զվերջին ստացող սուրբ աւետարանիս զպարօն հազարչան և զեղբայրն իւր զԱմիտ պէկն և զԲարվար . . . յիշատակ ծնողաց իւրոց, և որդւոց իւրոց Մանտավաքին, և Ասարին, և տէր Յովհաննէսին . . . դարձեալ յիշեցէք ի Գրիստոս զորդի Մանտավանքին զՊետրոսն և զՊաւղոսն որ ետուն կրկին նորոգել զսուրբ յաւետարանս յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողաց և մաւրն Խըրմըզին . . . ի թուին հայոց ՌԻԵ. (1025=1576) ձեռամբ տէր Յակոբ կրաւնաւորին. «այլ գրով» զվերջին ստացող սուրբ Աւետարանիս, և կազմող խաչիս Արիստակէս քահանայն և կողակիցն Մարիամ Հեղինաս, որ գնեցին սուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրեանց և ետուն յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնի . . . յիշեցէք զՄարկոսն, Բարվարն, Ասլի պարօն, Ծաչիկն, Աղիզն, Խաչիկն, Խէր խաթուն . . . : «Այլ գրով» դարձեալ յիշեցէք Գանձի Սիմէօն դարբինն և հօրեղբօր որդիք Աւետիսն և Մառերն . . . Պետրոս լոկ անուամբ երէցս նորոգեցի սուրբ աւետարանս ի խնդրոց Սիմէոնին, Աւետիսին և Մառերին, զի անկեալ էր սուրբ աւետարանս ի ձեռն տաղակաց գանդեալ և քակեալ էին զերկու գլուխն. կարողութեամբ հոգւոյն սրբոյ բազում աշխատութեամբ հազիւ նորոգեցի . . . ի թուարեւութեանս հայոց ՌԺԻԵ . . . : «Նօտր գրով» դարձեալ յիշեցէք զՊաղար—սուլի քրիստոնեայքն.

Փափազն և իւր եղբայրն Տիպօլն, Եղիկն, Յայլան, Մարգարէի որդիքն՝ Եղիկն՝ Անտօն, Աւժեցի Յարութիւնն, Մալխասն, Գրիգորն, Սաւարն և իւր որդին Սիմաւօնն, Մանտաւաքն, Թադէոս և որդիք Չատիկն, Կակօսն, Վըրթանն, Աբրեհամն դարբին, Նորտունկն, Յայլայ պէկն, Պետրոսն, Սալանցի օղլի Կիրակօսն, Թորոսն, Սահակն, Աստըծատուրն՝ և որդիքն Թադէոսն, Մանուկն, Չատիկի՝ որդիքն Գրիգորն, Եղիկն, Սարգիսն, Նահապետի՝ որդի Կիրակօսն, Մանտաւաքի՝ որդի Մանուկն, եղբօր որդի Եղիկն, և առին զսուրբ աւետարանս յիշատակ հոգոց իւրոց և ծնողաց իւրեանց . . . և լուին ի ձեռն տէր Խաչատատուրին . . . Խաչատուր լսկ անուն երէցս գտայ սուրբ աւետարանս զի անկեալ էր ի ձեռն աւագակաց և այլասեռիցն առ ի թուարերութեանս հայոց ՌՃԿԳին, (1163=1714) և հայրապետութեան տէր Աղէքսանդրին և թագաւորութեան սուլթան Ահմետին . . . : «Քառասնօրեայ գալստեան պատկերին մէջը գրուած է» բարեխօսութեամբ սուրբ ծերունոյն տղայացեալ Փրկիչ արձակեալ ի կապանաց մեղաց զանախտան ծաղկողս զՆերսէս քահանայս և զմեր կնքաւոր Պետրոսն որ երախտիք ունի ի վերայ մեր և սիրէ զմեզ անկեղծ:

«Սուրբ հոգւոյ գալստեան պատկերին իստօրև կնօջ մը պատկեր ի ծունկս անկեալ և բազկատարած կայ, որ է Մամ խաթուն և միւս երես Քրիստոս նստեալ յաթոռ փառաց, որոյ ստօրև նոյնպէս ի ծունկս անկեալ և բազկատարած մի ծերունի և միւս երիտասարդ քահանայ, առաջինն է տէր Ղուկաս, և երկրորդն որդին տէր Սիմէօն, տէր Սիմէօնի ետեէն մի պատանեակ թագ ի գլուխ՝ Յովհաննէս, ամենեցուն երեսներ և ձեռքը սև, առաջին երեսի վրայ գրուած» սուրբ հոգիդ Աստուած գալստեամբ քո ի սուրբ վերնատունն և առատապէս բաշխմամբ պէսպէս շնորհացդ, ազատեալ ի դառն դժոխոց և յաններեկի տանջանացն զհոգի ծառայիցս քո զՂուկաս քահանայի և զՍիմէօնն իւր զաւակին և զկողակցին իւր Մամ խաթունին առողջութիւն իւր զաւակին սիրասնունդ Յովհաննիսին և թողութիւն մեղաց Մարթային:

«Յ.==Աւետարան թղթեայ միջագիր քայքայեալ».

Յշ . . . սմին այս Աստուածաւանդ սուրբ Աւետարանիս եռափափաք սիրով ստացող եղեալ սրբաւէր քահանայն Սիմէօն, և հանդիպեալ իմոյ նուաստութեանս հայրապետ՝ սպիտակ անուն, մոռացեալ զտկարութիւն հոգւոյ իմոյ՝ վասն Աստուածասէր փափաքմանն Սիմէօն քահանային . . . սկսայ . . . զի իմոյ ձեռամբս զթուղթն նշայեցի և սկսեցի և գրեցի և ծաղկեցի և կաղմեցիւ Սյս և գրեցաւ սա հաղար (հարազատ) աւրինակ է և յամենքնորի. դինա, նաև յարուեստ բանի ոչ յաննշան գրչէ, այլ լի և կատարեալ արուեստիւ ի բանս, ի փառս, ի լծօրդս, ի բացատս, և ի տրոհմունս առքանութեանց, ի ստուգութիւն կետից և ոլորակաց և սոցոյն սակիւ Աղաչեմ՝ զսուրբ դասս քահանայից առ հասարակ զհանդիպողսդ, որք ճաշակիք ի քաղցրաբուխ վտակաց քառաջեա հոսանաց կենդանական Աստուածախաւս սուրբ Աւետարանիս, մանաւանդ յորժամ՝ բառնայք ի ժամ սոսկալի սուրբ պատարագին, յորժամ՝ խաղան ի վերուստ յողջոյն ձեր իջանելով զաւրք հրեշտակաց և սգողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, յայնժամ՝ նովին սուրբ աւետարանաւդ և միջնորդարար կենդանական հրաշիւք սուրբ պատարագին, յիշեալիք՝ ի Ռիթատս զստացող սուրբ աւետարանիս զՍիմօն քահանայն և զամենայն արեան մերձաւորս, նաև զանդրանիկ որդին իւր Աստուածատուր քահանայն և զկիրակոս դպիրն նաև զյոզնամեղ կցողս հայրապետ աշակերտեալ բանի, և զհայրն իմ՝ զՄատթէոս քահանայն և զամենայն ազգատոհմս իմ և զուսուցիչս և զամենայն երախտաւորս իմ . . . Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս հայոց Պ. Ղ. Է. (897=1448) ի հայրապետութեան տեառն Կարապետի, եպիսկոպոսութեան եղբաւր որդոյն իւրոյ տէր Գրիգորիսի, առ ոտս սոցա աւարտեցաւ. տէր Աստուած պահեսցէ զսոսա ընդ երկայն աւուրս. Ծառիկու ընդհովանեաւ սուրբ Աստուածածնիս և միաբանից սուրբ ուխտիս Աստուածատուր կուսակրաւն արեղային և Սիմէօն քահանային և Գրիգոր տնտեսին և

Նուրբակի միայնակեցին և իշխան միայնակեցին, և դեռ
ռաբոյս սարկաւագացն Կիրակոսին և Վասիլին և Սիօնին
և Կիրակոսին և Սիրերին և Պապուկին . . . :

«Այլ գրով» ի թուին Զ. Ի. Ե. (925=1476) ես Մկրտիչ
երեցս և հարսն իմ Մելիք խաթուն ստացանք զսուրբ
աւետարանս ի հալալ արդեանց մերոց ի յիշատակ մեր և
ծնողաց մերոց պարսն Վարդին մաւր իմոյ Մարթային, և
հարսինն ծնողաց՝ հաւր իւրոյ Մկրտչին և մաւր իւրոյ ճալ
խաթունին և եղբաւր իւրոյ Ալէքսանոսին և զաւակին իւրոյ
Կարապետ սարկաւագին, և ամենայն արեան մերձաւորաց
մերոց, և եղաք յիշատակ ի վանս Պալախառոյ ի դուռս
սուրբ Գէորգայ զաւրավարին . . . և մի ոք իշխեսցէ հա-
նել զ՝սա ի դրանէ սուրբ եկեղեցւոյս, ոչ առաջնորդ և ոչ
ազգականք մեր, և ով ոք յանդքնի և հանէ ծախելով և
կամ դրաւ դնելով, պատիժն Աստուծոյ կրեսցեն և ի
սուրբ Գիորգայ:

«Այլ յիշատակաւ» . . . Քրիստոս Աստուած . . . արա
արժանի և ընդունելի զվերջին ստացող զխոճա Խաչա-
տունն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց և վաստակաց
իւրոց յիշատակ անջինջ ետ ի դուռն սուրբ Աստուածած-
նին իւր հոգոյն և ծնողացն հօրն Պետրոսին, մօրն Մա-
րիամին, և կողակցին Սառային, և իւր զաւակին Եղիսա-
բեթին և այլ ննջեցելոցն . . . Աստուած իւրեանց քա-
տաստանն քաղցր առնէ . . . թուին Ռ. Ճ. Ժ. Ը. (1118=
1669) ես Պետրոս երեցս նորոգեցի աւետարանս զայս
և կապեցի . . . : «Ի վերջն Ղուկասու» . . . ապիկար գրո-
ղիս Հայրապետ վարդապետի Տաթևացւոյ ողորմեա տէր
իմ տէր: «Նոյն յիշատակարան կրկնուած է ի վերջն Մատ-
թէոսի և Մարկոսի»:

Մէկ աւեսարան Կիւմիւլիսանայի եկեղեցւոյն ի ձեռն
սէր Մասաթիա ֆահանայի.

. . . յ2 . . . մարգարտաշատ պատուականաձև սուրբ
աւետարանն աւարտ եղև ի դառն և վշտաշատ ժամանա-
կիս. ձեռամբ յողնամեղ Յօհան սուտ և խաբերայ Հի-

զանցւոյ . . . ի սուրբ քաղաքս Երուսաղեմ. ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ Տեառն եղբար Սթոռոյս. և սուրբ Յակոբայ գլխատանս որդւոյն Զեբեթեայ, ի Հայրապետութեան սուրբ աթոռոյս տէր Գրիգոր արհուն, ի թուականիս հայոց ՌՃԶ. (1076=1627) անմեղադիր լերուք այլ ու այլ գրիս զի շփոթով գրեցի . . . յիշեցէք զՅօհան Հիզանցիս և զԾնողսն իմ զտէր Յովհաննէսն և զՍ.Հ.Լ. . . և զտէր Մարտիրոս թղթիս կոկողն . . . : «Այլ գրով» յիշատակ է սուրբ աւետարան Ղայսերցի Մուրատին հոգոյն և ծնողացն և նախնեացն ամենայնի և ետուր յիշատակ ի ձեռն տէր Պետրոսին . . . ճոտար գրով» :

Իսկ և յետ մատենիս որ եղև յիշատակ ձեռամբ Մարկոսի եպիսկոպոսի Առաջնորդի Նիկոմիդացուց դահլիւ և սուրբ Աստուածածնայ սպասաւորին որ ի մալեր (անհասկանալի) հրին պատրիարքութեան եղի և սա ի քաղաքս Իզնիմիտ ի դրունս սուրբ Աստուածածնին եկեղեցին կայացելոյն որ էր թիւն հայոց ՌՃԼԶ (1136=1687) ապրիլ ամսոյն ժե . . . :

1. Փոքրիկ ժամագիրք եւ Պատարագամատոյց, մաշեալ, թղթեայ.

—Յշ. Արդ ես մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ. Թումա անուն պիտակ վարդապետ. ի Քաջբերունեաց դաւառէ ի սուրբ ուխտէն Մեծօրայ, ի կարգէ աշակերտաց՝ մեծ վարժապետացն՝ Սարգսի և Վարդանայ և Գրիգորի Տաթևացւոյ. սրբագրեցի զգիրս հասարակաց աղաւթից, և յիններորդ մասն բաժանեցի, և ետու ի ձեռս մանկանց եկեղեցւոյ. Վասնորոյ յերեսանկեալ պաղատիմ՝ Քրիստոսակիր եղբարցդ. և ճշմարիտ ուղղագիր գրչացդ, որք ընդօրինակէք և կամ ուսանիջիք, զնկարագիր բանիս, այլ մի այլալէք ազաչեմ, և զսակաւ յիշատակարնս գրեսցիք, զի յամենեցունց ճանաչեալ լինի այս աւրինակ, զի և դուք գրեսցիք ի գիրն կենաց և զմեզ անմոռաց յիշեսցիք յաղաւթս ձեր հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնաւազաւք և հարազատաւք, և թողութիւն մեղաց շնորհեցէք. . . :

... Արդ գրեցի զփրկական խորհուրդ պատարագի
և հասարակաց աւղաւթս մերոյս եկեղեցւոյ ի վայելումն
անձին սրբասէր կրօնաւորին որ ստացաւ զսա յիշ-
շատակ . . . :

Գրեցաւ սա ի թուականիս մերում Զ.Ժ.Դ. (914=
1465) ձեռամբ մեղապարտ և անարժան երիցու Աղա-
րիայի . . . :

1. Յայսմաւորք (Կիւմիւհանէ. Քիւրմնեան Յօհան-
նէսէնց սանը, մաֆուր բոլորագիր, քոթեայ):

Յշ . . . «Յուսոփէ Աստուծոյ և սիրով սրբոց նորա
նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արեւելցի ի միասին հա-
ւաքեցի զտաւն սրբոցս Աստուծոյ ըստ իւրաքանչիւր յիշ-
շատակի աւուրց: Գրեցի և պատմութիւնս նոցունց որոց
ոչ էր եղեալ ի գիրս յայսմաւուրցն, և խառնեցի ընդ
նախակարգսն. և աղաչեմ զտաւնաւղսդ և զգրաւղսդ
գրել և զայս յիշատակ բանի, զի և դուք գրեալիք ի գիրն
կենաց. և որ բառնայ զմերս՝ ջնջեսցի և ինքն ի դպրու-
թենէն կենաց: Եւ եղև իրակութիւնս այս ի Զ.Ժ.Ը. (718=
1269) թվականիս յաշխարհիս կիլիկեցւոց ի Սիս մայրա-
քաղաքի, ի թագաւորութեանն Հեթմոյ, և յառաջին ամի
իշխանութեան որդոյ նորին Լևոնի: ԿԶ. (66) ամի կենաց
պանդխտութեան մերոյ, յորում աղարան եղև ի փառս
Աստուծոյ յաւիտեանս ամէն:»

Եւ ճառք յաւելաք մեք ընդ հինն խառնեալ Ճ, Հ,
անուամբ և շնորհաւքն Աստուծոյ:

... Աստանաւր աւարտեցաւ Քրիստոսաշնորհ վկայա-
պատում՝ մարգարտաշար տառս այս ի թվականիս հայոց
Պ.Յ.Բ. (862=1413) և մայիս ԻԶ (26), ընդ հովանեաւ
սուրբ Թէոթորոսի մեծափառ և բարձրապատիւ ուխտի,
և սուրբ Աստուածածնի և սուրբ Սարգսի և սուրբ Յա-
կոբայ կենաց բարեխաւսի և սուրբ Գրիգոր լուսաւորչի,
և այլ սուրբ նշանացս և սուրբ նշխարաց որ աստ կան
հաւաքեալ: Արդ աղաչեմք զամենեւեան յիշել յաղաւթս

ձեր զստացող դրոցս զՄատթէոս երէցն և զհայրն իւր զԹորոս երէցն և զմայր իւր զմեծ խաթուն. և զերախտաւորն իւր զկարապետն և զՄելիքն և զամենայն արեան մերձաւորսն իւր, զկենդանին և զննջեցեալս առ Քրիստոս, և զԱռաքել երէցն և զծնաւդան և զեղբարսն իւր, ընդ նմին և զգրող սորա զՅովհաննէս արեղայն և զծնաւդան և զեղբարսն իւր, զկենդանին և զհանգուցեալս առ Աստուած, և զհայր վանացն Զաքարէ արեղայն, և զծնողսն իւր, և զայլ սպասաւոր սուրբ ուխտիս միաբանքն, զՄտրտիրոս հին հայրապետն և զՅովսէփն և զկիրակոսն և զՎարդանն և զՊետրոս և զԱստուածատուր ավեղայքն, և զՄկրտիչ երէցն որ մեզ սիրով սէր արարին, և զգործաւոր վանիցս զՄկրտիչ տնտես և զերկու Յակոբն և զՅովհաննէս և զԳրիգորն և զԼուսպարոն և զԽաչատուր և զՍիօն սարկաւագերն, և Քրիստոս Աստուած որ առաւն է իտուրս բարեաց ձեզ յիշաւդացդ, և մեզ յիշեցելոցս առ հասարակ պարգևեցէ զերկնից սուրբ արքայութիւն:

1. Նարեկ. թղթեայ, սկիզբէն պակաս մինչև (լք) գլուխ, նոյնպէս և վերջին մասնէն. բայց ունէր յիշատակարան յետ յիշատակարանի սուրբ հեղինակին, յորմէ զկնի կ'սկսի «ի փայտն ժամահարիս Յշ. ի լիման դժագործութեանս լիակատար դոյութիւն Աստուծոյ, և ի կատարման ձեռակերտիս՝ անձեռագործ փառեքանութիւն Քրիստոսի, և ի հանգստեան աւուրս՝ անհանգիստ բառբառով հանգըստարար հոգին սուրբ օրհնեալ և գովեալ և փառեբանեալ, երկրպագեալ և փառաւորեալ, այժմ ի ներկայս՝ նոյն և յապառնին և յանդրան յաւիտենին, ամէն, այո, Ալելուիա: Աւարտագրեցաւ լուսաղարդ հրաշաւոր, խմբաւոր և զարմանաւոր ամենաբուրեաւ աղնիւ կնգրկաւ խընկեալ մատեանս Աստուած խօսական, որ ամենագովեալ և սուրբ և անբիծ լեզուէ և մաքուր շրթանց մեծի Աստուածաբան հոգեկտակ մատենագրի, քաջ հռետորի և բարձրահանճար փիլիսոփայի հայոց, Գրիգորի Նարեկայ գերափայլ և հռչակալուր վանաց վանականի, արդուն հսկողի և կա-

նոնակատար վարժապետի, որով հնարեալ յարմարեալ, կազմեալ զայս ինչ զօրեղ սպեղանին ողջացուցիչ վիրաց հարուածոց աներևութից գաղտնեաց հանուրց խոցուածոց և ցաւոց անտեսականաց: Արդ ես մարգարէ անուամբ և ոչ դործով, սորին գծագիր, յաղթեալ սիրով փափաքմանս հանդերձանաւք շարադրեցի, նկարեցի, ձևակերտեալ յայս ինչ . . չադրութիւն գրուածոց յանկեալ կատարմամբ ի թիւ համարոյս մերոյ տաւմարի ՊԺ, (810=1301) և ի փետրվարի ամսոյ Ի, ի փառս Քրիստոսի:

. . . «Փառք Ամենասուրբ երրորդութեան . . . ելցէ և ի մէջ օրհնութիւն, ի նուազ և տկար հողոյս . . . որ արժանի արար զիս հասանել ի կատարումն գրոյս . . . զոր . . . հայցէն ի Քրիստոսէ իբրև զնաւաբեկութիւն թէ երբ հաւանիցեմ ի կատարումն տառիցս: Ընուլ զպակասումն տառիս և ընուլ զպակասութիւն կրօնաւորաց, որ ի մէջ երկրի երկրորդ երկինք և սոքա յառաջին և ի նորոց կատարանացն ի տառից վարդապետաց, յԱռաքելոց և յԱւետարանչացն սրբոց, որք ի մարդեղութեանն Քրիստոսի . . . ականատեսք և սպասաւորք եղեն մինչև ի համբառնալ բանին յերկինս և ի նստիլ ընդ աջմէ հօր: . . . եւ զինի վերափոխուելոյ նոցա յաշխարհէս գրով աւանդեցին մեզ և եղին յեկեղեցին Քրիստոսի յընթերցումն ամենայն հաւատացելոց, հաւատալ յԱմենասուրբ երրորդութիւնն, ի հայր և յորդի և ի հոգին սուրբ, որ է գլուխ ամենայնի . . . եւ նուաստս և արուստ յետին և մեղաւք խաւարեալ ծառայո Քրիզոր . . . քահանայ, որ բազում աշխատութեամբ զբեցի զոս ի դառն և ի նեղութեան ժամանակիս, որ զծովն պատեալ են ուռուսաց աղբն, որ բազում և անթիւ մարդիկ սրախող խող արարին ի Տրապիզոն, ի Վատնա, ի Յիւնիա, և ի բազում տեղիս, որ այնչափ խեղճ եղև, որ ոչ կարեմբ գրով արկանել: Եւ ես անարժան և նուաստ ծառայո զայս Աստուածաշունչ գերբս գրէի, յետոյ թաղաւորն անթիւ զաւրաւք ելեալ գնաց ի վերայ ուռուսաց աշխարհին, ապա զվերջն Աստուծոյ է զիտելի: . . . որք հանդիպիք այսմ տառիս . . . յիշեսցիք . . . զուսուցիչն իմ զողջախոհ և զհեղահոգի զբաջիմաստուն և զանախտ նկարագիրն զՄարտիրոս քահանայն . . . որ բազում աշխատանք ունի ի հետ մեղաւորիս, և ուսոյց զգերս և զծաղիկս: Եւ մարմնաւոր զպապն և զմայրն իմ զԽուսկիկին, և զեղ-

բարս իմ. զհայր Անտոնն, զԽուպրիմանն, զՊապաճանն, և զորդիս իմ զՍրապն և զամենայն արիւն մերձաւորս իմ. և զհոգւոր եղբարքն իմ զտէր Վարդանն, զտէր Մարութէն, զտէր Յուսէփն, զտէր Գրիգորն, զմիւս տէր Վարդանն, և զհոգւոր աշակերտքն իմ, զՄանուէլ, զՄելքոն դպիրն, զՄելքիսեղեկն . . . որ մեզ չար կամենայ. նոցա հոգւոյն Աստուած ողորմի . . . : Յիշատակ է քարոզ գիրքս մ. Սահիպի յարին հոգւոյն, Հերիքին, Կուկազին. հօրն Կուպէկին, մօրս Հերիքէին, որդւոցն Միսաքին, Սուտանին. և ձեռն տէր Պաւղոսին, աղբաւրս Խուշախիս»:

Ի հաւաքածոյից Տ. Յովն. ա. Բահանայ
Մկրեանի յիսկականէն ընդօրինակեալ
իւրով ձեռամբ:

Տրապիզոնի հայ գիւղացու կեանք

Տրապիզոնի լեռներու, անտառներու մէջ բնակութիւն հաստատող հայերն, ինչպէս գիտենք, ամբողջովին Համշէնցի և Սև գետացի հայերն են: Սոքա այն սարսափելի կոտորածէն յետոյ մոլեռանդ մահմետականներու և ենիչերիներու սարսափէն խոյս տուած, միտուած են հսկայ ու մթին անտառներու խորը, տակաւ առ տակաւ անտառներու հսկայ ժայռերը տապալում, խուլ վայրերը առանձին-առանձին բնակութիւն հաստատած և հետզհետէ ընդարձակելով իրենց գործերը՝ երևան եկած են, կազմած 15—20-ի չափ գիւղեր ցանցառ աներով:

Համշէնք և Սև գետը, ինչպէս գիտենք, կը բաղկանայ երկու հովիտներէ, որ Բաբերդի հիւսիսային լեռներէն մինչև Սև ծով կը տարածուին, առաջինը ծովեզրեայ Իրիզէ քաղաքով կը վերջանայ, երկրորդը Սիւրմէ, որ յարևելս Տրապիզոնի հրուանդանի մի արևմտեան կողմին ստորոտը, հանդէպ Տրապիզոնի շինուած է:

Մենք այժմ պիտի ներկայացնենք Համշէնի և Սև գետի կոտորածէն խոյս տուող այն տոհմն, աշխատասէր և չարքաշ հայերու կեանքը, որոց մէջ ծնած, մեծացած և որոց աշխատանքին ևս մասնակցած եմ. պիտի ներկայացնեմ նոցա աշխատութեան եղանակները մանրամասն թէ իւրաքանչիւր տուն, ինչպէս անտառին մի խորշը առանձին վայր տուն, մառան, մարագ, գոմ. կոթոբ, փուռան, կը շինէ, տանը շուրջը ինչպէս